**EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Փետրվարի 19*

# ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
# PRESS RELEASE

Կանադայում ՀՀ դեսպանությունը տեղեկացնում է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 2013թ. կազմակերպում է համահայկական նկարչական 4-րդ մրցույթ-փառատոնը, որը կրում է «Հայկական լեռնաշխարհից ծնված ոգին» խորագիրը և նվիրված է պատմական և այժմյան Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի բնաշխարհին ու մշակույթին:

Մրցույթին կարող են մասնակցել 6-18 տարեկան պատանիները:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մինչև **ս.թ. հունիսի 9-ը** ներառյալ:

*Կից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հայտարարությունը (5 էջ):*

7 Delaware Avenue, Ottawa, Ontario K2P 0Z2
Telephone: 613 234-3710 Fax: 613 234-3444

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը 2013 թվականին կազմակերպում է համահայկական մանկապատանեկան նկարչական 4-րդ մրցույթ-փառատոնը՝ ***«Հայկական լեռնաշխարհից ծնված ոգին»*** խորագրով:

Մրցույթի նպատակն է խրախուսել Հայաստանի աշխարհագրության և հայ մշակույթի իմացությունը, նպաստել հայ մանուկների և պատանիների Հայկական լեռնաշխարհի, որպես հայերի հայրենիքի, ինչպես նաև մշակույթի բազմազանության և բազմաշերտության մասին պատկերացումների ձևավորմանը, բնության ու մշակութային երևույթների և դրանց կապի գեղագիտական իմաստավորմանը:

Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել նկարչության հանդեպ սեր և կարողություն դրսևորող 6-18 տարեկան հայերեն ուսուցմամբ վարժարանների և կրթօջախների (այդ թվում՝ մեկօրյա), մշակութային կենտրոնների սաները, ինչպես նաև այլ դպրոցներ հաճախող հայ և օտարազգի պատանիներ ու անհատներ:

Մրցույթ-փառատոնը նվիրված է Պատմական ու ներկա Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի տարբեր հատվածների բնաշխարհին և մշակութային երևույթներին: Մասնակիցներից ակնկալվում է իմաստավորված և գրագետ համակցել աշխարհագրությունն ու մշակույթի տարբեր տարրեր՝ գեղագիտական անդրադարձ կատարելով բնության և հայ մարդու ստեղծած կոթողներին կամ հերոսական, ստեղծագործական, պոետիկ ոգու դրսևորումներին: Արդյունքում նախատեսվում է ստանալ գեղագիտական և ստեղծագործական նոր ընթերցումներով Հայկական լեռնաշխարհի քարտեզը:

Մասնակիցները կարող են անդրադարձ կատարել պատմական և մշակութային գործիչներին, պատմական իրադարձություններին, երգերին, պարերին, արվեստի տարբեր տեսակներին, ավանդույթներին, խոհանոցին, կենցաղին, ճարտարապետությանը, իրավունքին, փիլիսոփայությանը, կրոնին, կենդանական աշխարհին ու բնությանը, առասպելներին և այլնի՝ դիտարկելով ընտրված երևույթները համապատասխան բնական և մշակութային համատեքստում: Հնարավորության դեպքում, ցանկալի է կրթական հաստատության կամ երկրի կողմից նկարների կենտրոնացված առաքումը՝ տարբեր տարիքի հատկապես հաջողված նկարների ընտրությամբ:

Մասնակիցները պետք է դիմեն **nkarchakan@gmail.com** էլեկտրոնային հասցեով մինչև ս./թ. հունիսի 9-ը ներառյալ:

Մրցույթ-փառատոնի առաջին փուլում հաղթողների աշխատանքները կներկայացվեն Գեղագիտության ազգային կենտրոնի ցուցահանդեսում, որը տևելու է հոկտեմբերի առաջին տասնօրյակից մինչև նոյեմբերի առաջին տասնօրյակը: Ցուցահանդեսին մասնակցած բոլոր աշխատանքները կտպագրվեն ցուցահանդեսի ալբոմում:

Մասնագիտական հանձնաժողովի եզրակացության, ինչպես նաև ցուցահանդեսի հանդիսատեսի քվեարկության արդյունքներով հոկտեմբերի առաջին տասնօրյակում կհայտարարվեն երկրորդ փուլի հաղթողները: Մրցույթ-փառատոնի առաջին փուլի բոլոր հաղթողները կստանան ցուցահանդեսի ալբոմ: Երկրորդ փուլում հաղթողները կստանան նաև հիմնական և խրախուսական մրցանակներ:

Համահայկական մանկապատանեկան նկարչական 4-րդ մրցույթ-փառատոնի շրջանակներում նախատեսվում են նաև լրացուցիչ միջոցառումներ, որոնց ցանկը և ժամանակացույցը կներկայացվի ընթացքում:

Մրցույթ-փառատոնին մասնակցող դպրոցների **մանկավարժների համար կկազմակերպվի և կտեսագրվի սեմինար**, որը ապրիլ ամսին կտեղադրվի Գեղագիտության ազգային կենտրոնի պաշտոնական www.nca.am կայքում, Youtube-ում և ՀՀ կրթության և գիտության նախարարության էլեկտրոնային գրադարանի www.spyurq.dasagirq.am կայքում:

Փառատոնի շրջանակներում արտամրցութային կարգով՝ ցուցահանդեսի կազմակերպման համար, ընդունվելու են նաև **կիրառական արվեստի գործեր** (ժանյակագործություն, ասեղնագործություն, գորգագործություն, կավագործություն, փաստագործություն և այլն):

Նախատեսվում են նաև այլ տեսակի միջոցառումներ Հայաստանի և Սփյուռքի մասնակիցների համար:

Սույն հայտարարությանը կցվում է մրցույթ-փառատոնի նկարագրությունը:

Հավելյալ հարցերով կարելի է դիմել **Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն.**

հեռ. +374 10 58-13-91
ֆաքս. +374 10 52-73-43
էլ.փոստ. spyurq@yahoo.com
Կայքէջ. www.edu.am, www.armedu.am
էջ Facebook-ում. «Սփյուռքի բաժին ՀՀ կրթգիտնախ»

**Գեղագիտության ազգային կենտրոն.**
հեռ. +374 10 58-75-60
էլ.փոստ. nkarchakan@gmail.com
Կայքէջ. www.nca.am
էջ Facebook-ում. «National Center of Aesthetics»

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Գեղագիտության ազգային կենտրոն

**ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻՑ ԾՆՎԱԾ ՈԳԻՆ**

## Համահայկական մանկապատանեկան նկարչական 4-րդ մրցույթ-փառատոն

Մրցույթ-փառատոնը նվիրված է հայ Պատմական ու ներկա Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի տարբեր հատվածների բնաշխարհին և մշակութային երևույթներին: Հայկական լեռնաշխարհի թե՛ մշակութային, թե՛ պատմական, թե՛ սոցիալական բազմաշերտությունը, ինչպես նաև բնությունը, դարեր շարունակ խթանել են տարբեր ստեղծագործական և պատմական իրադարձությունները՝ Հայկական լեռնաշխարհից ծնված ոգու դրսևորումները: Մասնակիցներից ակնկալվում է իմաստավորված և գրագետ համակցել աշխարհագրությունն ու մշակույթի տարբեր տարրեր՝ գեղագիտական անդրադարձ կատարելով բնության և մարդու ստեղծած կոթողներին կամ հերոսական, ստեղծագործական, պոետիկ ոգու դրսևորումներին:

**Մրցույթ-փառատոնի մասնակիցները.**

Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել երկու տարիքային խմբեր.

- 6-13
- 14-18:

**Մրցույթ-փառատոնի անցկացման կարգը.**

Մրցույթը նախատեսված է անցկացնել երկու փուլով:

Առաջին փուլում նկարները մասնակիցների կողմից ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ մինչև ս.թ. հունիսի 9-ը: Մասնագիտական հանձնաժողովի կողմից ընտրվում են լավագույն աշխատանքները՝ ցուցահանդեսը կազմակերպելու և տպագրվելու նպատակով:

Երկրորդ փուլում մասնակիցները ներկայացնում են իրենց աշխատանքների բնօրինակները՝ ցուցահանդեսի համար: Երկրորդ փուլում ցուցահանդեսին ներկայացված նկարների հեղինակներից կընտրվեն հիմնական և խրախուսական մրցանակակիրներ (այդ թվում՝ քվեարկության արդյունքում այցելուների համակրանքի արժանացած 1 մրցանակ):

**Ներկայացվող պահանջները.**

Նկարները պետք է լինեն 29x42 սմ, 50x35 սմ կամ 70x50 սմ չափի՝ նկարված ցանկացած ոճի և ցանկացած նկարչական նյութի օգնությամբ (գուաշ, մատիտ, պաստել և այլն): Նշված չափերին չհամապատասխանող աշխատանքները ինքնաբերաբար մերժվելու են:

Գնահատման ընթացքում հաշվի են առնվելու.

- նկարի գաղափարի պատկերայնությունը, յուրօրինակությունը,
- գեղարվեստական կատարումը,

- **Ողջունվելու են նախագծային աշխատանքներ**[1]

**Մեթոդական աջակցությունը.**

Մրցույթ-փառատոնին մասնակցող դպրոցների մանկավարժների համար Երևանում կկազմակերպվի սեմինար: Սփյուռքում գործող մանկավարժների համար սեմինարի տեսագրությունը ապրիլ ամսին կտեղադրվի Գեղագիտության ազգային կենտրոնի պաշտոնական www.nca.am կայքում, Youtube-ում և ՀՀ կրթության և գիտության նախարարության էլեկտրոնային գրադարանի www.spyurq.dasagirq.am կայքում:

Ընթացքում նաև կտրամադրվեն գրականության ցանկ, մեթոդական նյութեր, գրականություն, որից կարելի է քաղել պահանջվող տեղեկություններ:

**Ակնկալում ենք նաև, որ մանկավարժները նախապատրաստական փուլում կապի մեջ կմտնեն Գեղագիտության ազգային կենտրոնի աշխատանքային խմբի հետ:**

**Նկարների ներկայացման պայմանները.**

Առաջին փուլում նկարները ներկայացվում են PDF կամ JPG ձևաչափով ՀՀ կրթության և գիտության նախարարության և Գեղագիտության ազգային կենտրոնի կողմից համատեղ սպասարկվող **nkarchakan@gmail.com** էլեկտրոնային հասցեով մինչև 2013թ. հունիսի 9-ը ներառյալ: Նկարների մեծ քանակի և ծավալի դեպքում ցանկալի է դրանք ուղարկել ոչ թե կցելով նամակին, այլ տեղադրելով որևէ առ ցանց ալբոմում (օրինակ՝ Picassa, 4shared.com և այլ):

Առաջին փուլում նկարը ուղարկելիս հարկավոր է, որ.

1. PDF կամ JPG ֆայլերը ունենան նկարի հեղինակի ազգանունը և անունը՝ որպես ֆայլի անվանում,
2. էլեկտրոնային նամակում նշված լինի նկարի անվանումը, չափը և տեխնիկան, հեղինակի անունը և ազգանունը, բնակության երկիրը, քաղաքը, տարիքը և կրթական հաստատությունը (այն դեպքում, եթե նկարը ներկայացվում է ոչ թե անհատի, այլ որևէ կրթօջախի կողմից) և կապի միջոց՝ էլ. հասցե, հեռախոսահամար, հասցե:
3. նկարչությունը դասավանդող մանկավարժի անունը, ազգանունը:

Ուշադրություն առաջին փուլի համար հայտերը պետք է ներկայացնել միայն էլեկտրոնային տարբերակով՝ ուղարկելով դրանք **nkarchakan@gmail.com** էլ. հասցեին:

Նույն տեղեկություններ պետք է լինեն նաև նկարի **հետևի մասում**՝ բնօրինակը երկրորդ փուլին ներկայացնելու ժամանակ:

Երկրորդ փուլի համար առաջին փուլում հաղթած նկարների բնօրինակները մինչև սեպտեմբերի 16-ը փոստով կամ առձեռն պետք է փոխանցվեն Գեղագիտության ազգային կենտրոն.

National Centre of Aesthetics, Studio-college, Moskovyan 37, Yerevan, 0001, Armenia

---

[1] Հատուկ ուշադրություն է դարձվելու մեկ թեմայի կամ առաջարկության շուրջ աշխատած խմբակային կամ համագործակցական աշխատանքներին՝ նախագծերին:

0001, Երևան, Մոսկովյան 37, Գեղագիտության ազգային կենտրոնի ստուդիա-քոլեջ

Ծրարի վրա պետք է լինի «HAMAHAYKAKAN NKARCHAKAN MRTSUYT» նշումը:

**Պարգևները.**

Մրցույթ-փառատոնի առաջին փուլի բոլոր հաղթողները կստանան ցուցահանդեսի կատալոգ:

Երկրորդ փուլում հաղթողները կստանան նաև մրցանակներ:

**Մրցույթ-փառատոնի ժամանակացույցը.**

| N | Գործողություն/աշխատանք | Ժամկետ |
|---|---|---|
| 1. | Մանկավարժների համար մեթոդական սեմինարի անցկացում և կայքում տեղադրում, մեթոդական նյութերի տրամադրում | փետրվար-ապրիլ |
| 2. | Առաջին փուլում աշխատանքների ներկայացման վերջնաժամկետ | հունիսի 9-ը |
| 3. | Առաջին փուլի արդյունքների ամփոփում | մինչև հուլիսի 7-ը |
| 4. | Երկրորդ փուլի աշխատանքների բնօրինակների ներկայացման վերջնաժամկետ | սեպտեմբերի 16-ը |
| 5. | Ցուցահանդեսի բացում | հոկտեմբերի երկրորդ տասնօրյակ |
| 6. | Ցուցահանդեսի փակում և հաղթողների հայտարարում | նոյեմբերի երկրորդ տասնօրյակ |
| 7. | Հաղթողների հայտարարում, ալբոմի շնորհանդես և փակման արարողություն | դեկտեմբեր |